

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
„-----„ ----- 2016 թ.

Վավերացնում եմ
ռեկտոր Ա. Թարվերդյան
„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ**

Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած և համալսարանի ուսանողական, հասարակական կազմակերպությունների աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողներին խրախուսման համար, Համալսարանի կանոնադրության 7-րդ կետի գ) ենթակետի դրույթներին համապատասխան, սահմանվում են անվանական կրթաթոշակներ:
 2. Անվանական կրթաթոշակը սահմանվում է տվյալ մասնագիտության կամ հարակից բնագավառների մեծ ավանդ ունեցող խոշոր գիտնականների, գիտության և կրթության անվանի կազմակերպիչների անունով կամ էլ ռեկտորատի կողմից սահմանված այլ անվանաթոշակներով:
 3. Անվանական կրթաթոշակը տրվում է արտաբյուջետային միջոցների հաշվին:
 4. Անվանական կրթաթոշակը տրվում է համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա՝ երրորդ և բարձր կուրսերի գերազանցիկ և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողներին:
- Բացառիկ դեպքերում կարող է ներկայացվել քննարկման ուսանողի թեկնածու, որն ունի 1-2 չորս գնահատական նախորդ կուրսերում: Անվանական կրթաթոշակի կարող են հավակնել անվճար և վճարովի համակարգի ուսանողները:
5. Անվանական կրթաթոշակ նշանակվում է համալսարանի բոլոր ֆակուլտետների երրորդ և բարձր կուրսերի վերը նշված պահանջներին բավարարող ուսանողներին:
 6. Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողի թեկնածությունը լայնորեն քննարկվում է կուրսի, ֆակուլտետի, ՀԱԱՀ ուսանողական խորհրդում:

7. Առաջարկությունը կայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի և ուսանողական խորհուրդների համատեղ նիստում:

8. Անվանական կրթաթոշակի նշանակումը կատարվում է համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ: Գիտական խորհրդի նիստի որոշման հիման վրա համալսարանի ռեկտորը տալիս է հրաման:

1. Համալսարանում սահմանել հետևյալ անվանական կրթաթոշակները

1.1. Ագրոնոմիական ֆակուլտետ

ակադեմիկոս Մ. Գ. Թումանյանի անվան

ակադեմիկոս Գ. Խ. Աղաջանյանի անվան

1.2. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ

ակադեմիկոս Վ. Ե. Թայիրովի անվան

ակադեմիկոս Զ. Ք. Դիլանյանի անվան

1.3. Գյուղ.մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետ

Պրոֆեսոր Ս. Սահակյանի անվան

Պրոֆեսոր Հ. Մաքսապետյանի անվան

Ակադեմիկոս Ա. Մաթևոսյանի անվան

1.4. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետ

ակադեմիկոս Ա. Զ. Թամամշևի անվան

Ակադեմիկոս Ա. Ա. Ռուխկյանի անվան

1.5. Տնտեսագիտական ֆակուլտետ

Պրոֆեսոր Ա. Քոչինյանի անվան

Քաղաքական գործիչ Ա. Մարգարյանի անվան

1.6. Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ

Պրոֆեսոր Բ. Մարտիրոսյանի անվան

1.7. Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ,

Պրոֆեսոր Ի. Վ. Եղիազարովի անվան

Քաղաքական գործիչ Ա. Ղ. Խանջյանի անվան

2. Սահմանել համալսարանի ,գիտական խորհրդի անվանական կրթաթոշակ

2.1. Համալսարանի ,գիտական խորհրդի կրթաթոշակը հատկացնել.

2.1.1. Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետին՝ մեկ տեղ:

3.Լրացուցիչ դրույթներ

- 3.1. Անվանական կրթաթոշակի չափը որոշում է համալսարանի գիտական խորհուրդը՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին:
- 3.2. Անվանական կրթաթոշակը ուսանողներին նշանակվում է ըստ կիսամյակների՝ կապված ուսանողների առաջադիմության հետ, հետագայում վերանայելով նշանակման հարցը:
- 3.3. Համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետին հատկացվում է երկու անվանական կրթաթոշակի տեղ:

Ծանոթություն. Եթե որևէ ֆակուլտետում տվյալ ուսումնական տարում կամ կիսամյակում չկան անվանական կրթաթոշակի պահանջները բավարարող հավակնորդներ, ապա այդ տեղը (տեղերը) համալսարանի գիտական խորհրդի որոշումով կարող է ժամանակավորապես հատկացվել այլ ֆակուլտետի: